

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 170.7-109.9-րդ հոդվածները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 170.7. Ակցիզային դրոշմանիշերի եւ (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) օտարելը կամ ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը

Սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշերը եւ (կամ) հսկիչ նշանները (դրոշմապիտակները) օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում հիսուն հատը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի եւ (կամ) հսկիչ նշանի (դրոշմապիտակի) համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չափով:

Նույն արարքը, եթե օտարված դրոշմանիշերի եւ (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) քանակը կազմում է հիսունից մինչեւ հազար հատ՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ օտարված յուրաքանչյուր դրոշմանիշի եւ (կամ) հսկիչ նշանների (դրոշմապիտակների) համար՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով:

Ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) ապրանքներ դրոշմավորելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչեւ երեքհարյուրապատիկի չափով:

Հոդված 170.8. Ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը

Ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Չոդված 170.9. Ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորման կանոնները խախտելը

Ակցիզային դրոշմանիշերի եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացառող ձեռով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված, ինչպես նաեւ որոշակի տարողության համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում երկու հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:»:

Չոդված 2. Օրենսգրքի 170. 12-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Չոդված 170.12. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ իրացման համար թույլատրելի ժամկետներից հետո որոշակի թվագրումով դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացումը

Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ որոշակի թվագրումով դրոշմանիշերով եւ (կամ) հսկիչ նշաններով (դրոշմապիտակներով) դրոշմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետներից հետո այդպիսի ապրանքներ իրացնելը, եթե դրանց ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև երեքհարյուրապատիկի չափով:

Նույն արարքը, որը կրկնվում է վարչական տուգանք նշանակելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (իսկ չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով գերազանցում է հարյուր հազար դրամը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:»:

Չոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2011 թվականի մարտի 1-ից:

Չեղիմակ՝ [Կարեն Վարդանյան](#)